Համաձայնագիր N «ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-02/22»-02

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-02/22» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան «12» ապրիլի 2022թ.

«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» պետական հիմնարկը, ի դեմս խորհրդի նախագահ Արա Շիրինյանի, որը գործում է ՀՀ կառավարության 2017 թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 6-րդ կետի 1-ին ենթակետի և Հանրային հեռարձակողի խորհրդի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս ընկերության գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, (կողմերից յուրաքանչյուրն առանձին հիշատակման ժամանակ այսուհետ նաև՝ Կողմ, համատեղ հիշատակման ժամանակ այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով Կատարողից 06.04.2022թ. ստացված N Հ.Մ./68/22 գրությունը՝ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) Կողմերի միջև 2021 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված պետության կարիքների համար հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայությունների մատուցման պետական գնման N «ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-02/22» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) փոփոխություններ կատարելու մասին.

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ Պայմանագրում կատարվում են հետևյալ փոփոխությունները.

1. Պայմանագրում ««Արդշինբանկ» ՓԲԸ» և «Հ/Հ 2470102796740000» բառերը փոխարինել համապատասխանաբար ««Ինեկոբանկ» ՓԲԸ» և «Հ/Հ 2050022082671001» բառերով:
2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
3. Պայմանագրի՝ սույն համաձայնագրով չփոփոխված դրույթները մնում են անփոփոխ:
4. Սույն Համաձայնագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակներից մեկական օրինակ յուրաքանչյուր Կողմի համար:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 5	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011430163	Հ/Հ 2050022082671001
ՀՎՀՀ 01539597	ՀՎՀՀ 01540062
Խորհրդի նախագահ՝ Արա Շիրինյան	Գործադիր տնօրեն՝ Հովհաննես Մովսիսյան